ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

25.04.2019
342-04

ՀՀ Ոստիկանության պետ
պարոն Վալերի Օսիպյանին

Հարգելի պարոն Օսիպյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ 2019 թ-ի փետրվարի 20-ին դիմել էր Ձեզ՝ խնդրելով հայտնել կա՞ն արդյոք ՀՀ ոստիկանության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնազերծվել են 2018 թ.-ին եւ եթե այո, ապա տրամադրել դրանց պատճենները:

Ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետից ստացվել է գրություն, որով նշված է, թե ԻԱԿ-ի կողմից հայցվող տեղեկությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով հնարավոր չի եղել նույնականացնել որպես կոնկրետ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ: Այլ կերպ ասած՝ ՀՀ ոստիկանությունը մեր պահանջած տեղեկությունը չի կարողացել որակել որպես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով «տեղեկություն»:

Գտնում եմ, որ ոստիկանության նման պատճառաբանությունն անհիմն է եւ առարկայազուրկ հետեւյալ պատճառաբանությամբ: Նախ, ոստիկանությունը պատասխանել է մեր 1-ին հարցին՝ նշելով, որ առկա են գաղտնազերծված տասնյակ **փաստաթղթեր**: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկություն է ի թիվս այլնի նաեւ **փաստաթղթերի** ձեւ կարող է ունենալ: Ավելին, հարցմամբ էինք արել նաեւ ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածին, որի տեքստից ուղղակիորեն բխում է, որ տեղեկություն է նաեւ փաստաթուղթը: Այսպես, ՀՀ Սահմանադրության նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և **փաստաթղթերին** ծանոթանալու իրավունք: Ուստի անհասկանալի է, թե ինչպես կարող էր ՀՀ ոստիկանությունը ԻԱԿ-ի կողմից պահանջված փաստաթղթերը՝ (պատճենը) չհամարել տեղեկություն:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաեւ այն հանգամանքին, որ մեր հարցմանն ի պատասխան տրամադրված գրության մեջ նշված է, որ փաստաթղթերի գաղտնազերծումն

ինքնին չի ենթադրում, որ դրանցում այլեւս չկան օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկություններ (օրինակ անձնական տվյալներ եւ այլն): Այսպես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալներն օրինական մշակելու հիմքերից է այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված լինելը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը նշում է, որ տեղեկություն է նաեւ անձի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձեւավորված տվյալը: Ուստի, տեղեկության անձնական վտյալ լինելը դեռեւս չի նշանակում, որ այն գաղտնիք է: Փոխարենը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը տեղեկության մերժման հիմքերը՝ նշելով, որ տեղեկատվություն տնօրինողը, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Հետեւաբար, մերժման հիմք կարող է լինել ոչ թե պարզապես անձնական տվյալ, այլ անձնական կյանքի գաղտնիք լինելը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում եմ տրամադրել ՀՀ Ոստիկանության՝ 2018 թ.-ին գաղտնազերծված փաստաթղթերի պատճենները:

Տեղեկության տրամադրումը մերժել բացառապես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ նույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով, իսկ պահանջված փաստաթղթերում մերժման ենթակա տեղեկություններ լինելու դեպքում պահանջվող փաստաթղթերը տրամադրել նույն օրենքի 8-րդ հոդվածի կանոնով՝ ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշմամբ սահմանված ձեւով մերժման ենթակա տեղեկությունն անընթեռնելի դարձնելու (ծածկելու, սեւացնելու կամ ջնջելու) միջոցով՝ չխմբագրելով տեղեկության (փաստաթղթի) մնացած մասը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան